

**ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻ«ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՐԴ ԴԱՐԸ
(1991-2017)», Երևան, ԵՊՀ հրատ., 2018, 512 էջ:**



Յայտնի է, որ ժամանակակից պատմություն գրելը չափազանց բարդ գործընթաց է, որը պահանջում է ոչ միայն գիտելիքների խոր և բազմակողմանի հմացություն, փաստերի համակողմանի համադրում, օրյեկտիվ եղակացություն, քանզի դեպքերի անմիջական մասնակիցներն ու պատմական իրադարձությունների իրականացնողների մի մասն իր սուբյեկտիվ ընկալումն ունի կատարվածի նկատմամբ, ինչը շատ հաճախ պահանջում է համակողմանի վերլուծություն ու գնահատականներ, որոնք ոչ միշտ են համընկում նրանց տեսակետի հետ և միշտ ընկալվում հասարակության որոշ մասի կողմից: Ուստի նման ուսումնասիրությունը պահանջում է երկար տարիների տքնածան և իմքնուրույն աշխատանք, որը կարող է հետաքրքրություն առաջացնել ոչ միայն նման հարցերով գրաղվող հասարակագետ-գիտնականների, այլև ընթերցող լայն շրջանակների մոտ:

Այս տեսանկյունից Յայաստանի Հանրապետության անցած քառորդարյա ուղղությանը լուրջ ներդրում է հայ պատմագիտական ոլորտում հասարակական քաղաքական բանավեճում: Պրոֆեսոր է. Մինասյանի աշխատությունը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմելու մեր անկախության 25ամյա անցած ճանապարհի գաղափարական, տնտեսական, սոցիալական, մշակութային քաղաքականության խմբիների վերաբերյալ: Ուսումնասիրությունը հայոց պատմության մեջ քննարկվող ժամանակահատվածում Յայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պատմության հնարավորինս ամբողջական պատմաքննական լուսաբան և խորը գիտական վերլուծության առաջին փորձն է՝ լայն հասարակությանը համակողմանիորեն ներկայացնելու հայկական գույք անկախ հանրապետությունների անցած ուղղություն հիմնախնդիրները, ձեռքբերումները, բացքողումներն ու թերությունները:

Է. Մինասյանի կողմից կատարված ուսումնասիրության հիմքն են կազմում բավականին նշանակալի արխիվային նյութերը, պետական, կառավարական, կուսակցական և այլ բնույթի հուշագրությունները և այլն, որոնցից շատերն առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Վերլուծելով երկու հանրապետությունների 2,5 տասնամյակ անցած ուղղությունների կյանքի բարեփոխումներն ու դրանց արդյունքները, արտաքին քաղաքականության խմբիները՝ հեղինակն իրավացիորեն նշում է, որ դրանք պայմանավորված էին որոշակի օրյեկտիվ պատճառներով և թվարկում ու վերլուծում է դրանք: Ըստ էության՝ է. Մինասյանի հետազոտության արդիականությունը զգալի է հասարակության ներքին և արտաքին կյանքի տարրեր ու լրտերում, մասնավանդ որ նորօրյա շատ խմբիներ իրենց արմատներով ձգվում են մինչև անկախության գործընթացի սկզբնական ժամանակները:

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Տնտեսական ոլորտում պետության դերակատարության, ազգաբնակչության սոցիալական վիճակի, նորանկախ պետականություններում հասարակական–քաղաքական կյանքի, պետականաշինության, հայ-աղործանական ծգձգված առճակատման, շրջափակման, նոր ծևավորվող միջպետական հարաբերությունների, ինֆնիշխան հայկական հանրապետությունների այլ ոլորտների քննարկումն ու վերլուծությունը առավել համոզիչ են դարձնում սույն հետազոտության հրատապությունը:

Ե. Մինասյանի ուսումնասիրության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է աշխատանքի փաստառատությամբ և տեսական ընդհանրացումներով ու վերլուծություններով:

Ե. Մինասյանի հանրագիտարանային բնույթի բազմապլան աշխատանքի առանձնահատկություններից է այն, որ նրանում առաջին անգամ ամենայն մակրամասնությամբ պատմագիտական վերլուծության են ենթարկվել քննարկվող ժամանակահատվածում անկախ Դայաստանի կենսագրության այնպիսի կարևոր ոլորտներ, ինչպիսիք են՝ մշակութային կյանքը, գիտությունն ու կրթությունը, առողջապահությունը, հայրենիք – սկզբուրոք հարաբերությունները և այլն:

Մեր կարծիքով՝ Դայաստանի Դանրապետության և Արցախի Դանրապետության խնդրո առարկա ժամանակահատվածի պատմության լուսաբանմանը նվիրված այս ծավալուն և համապարփակ հետազոտությունը՝ ներկայացված հարցադրումներով, հիմնահարցի լուսաբանման յուրահատուկ մեթոդով գիտական կայուն ուղի է հարթում հայկական երկու հանրապետությունների պատմության հետազա ուսումնասիրման համար, առաջ է բերում բանավեճեր, նոր քննարկումներ՝ ստիպելով շարունակել գիտական որոնումները:

**Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ամատունի Վիրաբյան**

**Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Եղիկ Պողոսյան**